ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Հրազդան քաղաք, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. 060-46-01-51

<<26>> ապրիլի 2014թ.

<<Գնումների աջակցման կենտրոն>>
ՊՈԱԿ-ի հետ <ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22>>
ծածկագրով շրջանակային
համաձայնագրեր կնքած բոլոր
մասնակիցներին

Հարգելի մասնակից,

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետարանը <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նպատակ ունի ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր կազմակերպության միջև կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/22 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները: Ապրանքների մատակարարման պայմանները սահմանվում են կից ներկայացվող պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցին (Հավելված 2) համապատասխան:

Ընթացակարգի ծածկագիրն է «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Հրազդան Սահմանադրության հրապարակ 1 հասցեով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետարանի աշխատակազմ, հանձնաժողովի քարտուղար Քրիստինե Բաղդասարյանին, մինչև 08.05.2014թ. ժամը 15:00-ին:

Հայտերը կբացվեն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետարանի աշխատակազմում, 08.05.2014թ. ժամը 15:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում Հրազդանի քաղաքապետարանի <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն >> ՀՈԱԿ-ի կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերումը:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետարանի <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար սեղմված բնական գազի մատակարարման (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որը ներկայացված է սույն հրավերի N1 հավելվածում:

Սույն հրավերի տեխնիկական բնութագրերից տարբերվող տեխնիկական բնութագրեր պարունակող հայտերը կմերժվեն:

Հայտը պետք է ներառի գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 5), ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

բ. Գնային առաջարկ (Հավելված 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22 ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել

տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22 ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սահմանադրության հրապակ 1 հասցեով, փաստաթղթային ձևով՝ մինչև մայիսի 8-ը՝ ժամը <<15:^{00}>>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝Քրիստինե Բաղդասարյանին:

Հեռախոս՝098-58-58-64:

Էլ.փոստ՝ baghdasaryan_1978@mail.ru:

Պատվիրատու՝ Հրազդանի քաղաքապետարան:

Տիկնայք և պարոնայք

Կից ներկայացնում ենք <<ԿՄՀՔ -ՇՀԱՊՁԲ-11/22>>ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հրազդանի քաղաքապետարանի <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար << սեղմված բնական գազի>> ձեռբերման համար մրցութային հայտեր ներկայացնելու վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը:

Խնդրում ենք անհապաղ էլեկտրոնային փոստով հաստատել սույն ծանուցումը և կից փաստաթղթերի պատշաճ ստացումը:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2014 թ մայիսի 8-ի ժամը15[00] ը:
Հայտերը կբացվեն նույն օրը և նույն ժամին Հրազդանի քաղաքապետարանում (հասցե՝ ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 հասցեում):
Հարգանքով՝
գնումների համակարգող՝ Քրիստինե Բաղդասարյան. Հեռ.՝ (098) 58-58-64

Հավելված 5
«ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22ծածկագրով
ընթացակարգի հրավերի
«ԿՄՀՔ- ՇՀԱՊՁԲ-11/22» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից N_____ ծածկագրով
պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ :
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը), (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

«____»_____20**14** թ.
(ամսաթիվը, ամիսը)

Կ.Տ.

Հավելված 5.1
«ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N «ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը

համաձայն հետևյալ գների՝

Չափաբաժին ների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ-ն**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով /
1	2	3	4	5=3+4
1	«Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N1»			
2	«Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N2»			
…	…			
…	…			

*

3-րդ սյունակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:
***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա գովյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը), (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրությունը)

Կ.Տ.

«___»_____20___թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 8
«ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N

ք. Հրազդան
«-----» ---------- 20—թ.

----------, ի դեմս Ընկերության տնօրեն՝ ----------, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ———————————— (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «սեղմված բնական գազի ձեռքբերման» N -------- ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգերի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «սեղմված բնական գազի ձեռքբերման» N -------- գնման պայմանագրից բխող պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաժ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ------ ----------թվերով -----, (---------- տառերով-------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարելու կամ ոչ պատշաժ կատարելու դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնութայն 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Մասնակցի բանկի անվանումը» կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այն բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը» հանձնարարում է «Մասնակցի բանկի անվանումը»-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ /անվիճելի/ կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 2014թ. ----------ի ----------ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

----------Մասնակցի անվանումը /Անունը/----------,
----------Հասցեն----------,
----------Բանկ----------,
Հ/Հ ----------,
ՀՎՀՀ ----------,
----------Մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանուն----------,
--Ստորագրություն----------,
---Մասնակցի գլխավոր հաշվապահի /հաշվապահի/ անուն, ազգանուն----------,
--Ստորագրություն----------,
Կ.Տ.

Նախագիծ

ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿՄՀՔ- ՇՀԱՊՁԲ – 11/22

ք. Հրազդան << >> << >> 2014թ.

Հրազդանի քաղաքապետարանը, <<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի՝ ի դեմս Յուրա Ավագյանի, որը գործում է ---------- հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «_____» -ն, ի դեմս տնօրեն _____յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված անվադողեր /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 **Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 30-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 3) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված

փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

9,5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

9.8Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
<<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1 Հ/Հ 24127002026600 ՀՎՀՀ 03019623	---------- ստորագրություն¤ Կ□S

ստորագրություն¤
Կ□Տ

Հավելված N 1
‘_____’ 2014թ. կնքված
ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ – 11/22գնման պայմանագրի

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր
Քաղաք Հրազդան ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ – 11/22 2014թ. կարիքների համար սեղմված բնական գազի ձեռքբերման

Հ/Հ	Անվանումը	Չափման միավոր	Տեխնիկական բնութագիր
1.	Սեղմված բնական գազ	$Մ^3$	Սեղմված բնական գազ ավտոմեքենաների լիցքավորման համար, սեղմված բնական գազի լիցքավորման մշտական ստացիոնար կայանից, կտրոնային:

- Մատակարարումն իրականացվում է մատակարարի միջոցների հաշվին

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

<<Հրազդանի համայնքային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ
Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1
Հ/Հ 24127002026600
ՀՎՀՀ 03019623

Ստորագրություն
Կ□Տ

Ստորագրություն
Կ.Տ.

Հավելված N 2
<<_____>> <<_____>> 2014թ. կնքված
<<ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22 >> *ծածկագրով*
գնման պայմանագրի

ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	քանակը	Նախատեսվում է գնել 2014թ. ընդ որում՝			Ընդամենը տարի
1	Սեղմված բնական գազ	$Մ^3$	20000	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	20000
	ԸՆԴԱՄԵՆԸ	$Մ^3$	20000				20000

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

<<Հրազդանի համայնքային կոմունալ
տնտեսություն>> ՀՈԱԿ
Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1
Հ/Հ 24127002026600
ՀՎՀՀ 03019623

---------- ----------

/ստորագրություն/ /ստորագրություն/
Կ.Տ Կ.Տ

Հավելված N 3
<<_____>> <<_____>> 2014թ. կնքված
ծածկագրով
<<ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22>> *գնման պայմանագրի*

Սեղմված բնական գազի վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	քանակը	Նախատեսվում է գնել 2014թ. ընդ որում՝		
1	Սեղմված բնական գազ	$Մ^3$	20000	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
	ԸՆԴԱՄԵՆԸ	$Մ^3$	20000	100%	100%	100%

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

<<Հրազդանի համայնքային կոմունալ
տնտեսություն>> ՀՈԱԿ
Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1
Հ/Հ 24127002026600
ՀՎՀՀ 03019623

---------- ----------

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի
2013 թվականի օգոստոսի 6-ի
N 673-Ն հրամանի
Հավելված 4
«.....».....2....թ. կնքված
<<ԿՄՀՔ-ՇՀԱՊՁԲ-11/22» պայմանագրի հավելված

Գնորդ	Վաճառող
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
_____	
_____	
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«.____» _____2____թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____»:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____2____թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Գնորդն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները /այսուհետ՝ Մատակարարում/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «____» _____2____թ.-ց «____»_____2____թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարարումների ժամկետները	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը/ըստ ժամանակացույցի/
Ընդամենը				

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
/ստորագրություն/

ազգանուն _____

ԿՏ

Ապրանքն ընդունեց

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

_____
/ստորագրություն/

Պատասխանատու ստորաբաժանման անդամներ՝

ազգանուն _____

ազգանուն _____

ԿՏ